դանոցներ, բայց այն տեղ էլ կատարվում է շատ դժուարութեամբ։ Այն գաւառներում, ուր չկան հիւանդանոցներ, կան արքունի ծաղկահատներ, իւրաքանչիւր գաւառում երկուսը։ Բացի դորանից ծաղկահատութեամբ՝ պարապում են նաեւ գիւղական հասարակութիւնից ընտրուած ծաղկահատներ, որոնք այդ արհեստը սովորել են բժիշկների առաջնորդութեամբ, և որոնք ազատուած են հասարակութիւնից մի քանի պարտականութիւններից. բայց սորանք իրանց անձնական պարապմանց պատճառով՝ շատ քիչ են օգնում գործին։

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒԱՅ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՍՆ 1891 ԹՈՒԱԿԱՆԻ

(Ցերես 24—27).

Թուահամարումն բնակչաց

Բագուայ նահանգի բնակչաց թիւը 1891 թ. համաձայն ոստիկանութեան տեղեկութեանց էր 777,356 հոգի երկսեռ, որոնցից 429,259 արական և 348,556 իգական։

Այս թուանշանքը կառավարչական շրջակայքում այսպէս է դասաւորուած։

	Արական		Իգական		Երկսեռ
Բագուայ քաղաքում	61,640	—	45,575	—	107,215
» գաւառում	38,950	—	30,132	—	69,082
Ղուբայ քաղաքում	9,136	—	7,181	—	16,317
» գաւառում	83,075	—	78,647	—	155,722
Լէնքորան քաղաքում	5,655	—	5,439	—	11,094
» գաւառում	63,462	—	52,675	—	116,137
Շամախու քաղաքում	14 679	—	9 037	—	23,716
» գաւառում	54,713	—	44,632	—	99,345
Սալիանու գիւղաքաղաքում	6,550	—	5,776	—	12,326
Ջաւադու գաւառում	48,063	—	38,452	—	86,515
Գեօկչայու գիւղաքաղաքում	671	—	281	—	952
» գաւառում	42,665	—	36,470	—	79,135
Գումարն է քղքց. և գիւղաքղքց՝	98,331	—	73,289	—	171,620
» գաւառաց	330,928	—	275,008	—	605,936
Ընդամենն է նահանգում	429,259	—	348,297	—	777,556